Digitally signed by HAKOBYAN ATOM
2004780207
15.09.2023թ.

Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոց

2023 – 2024 ուստարի

4-րդ դասարանի դասղեկի

տարեկան աշխատանքային

ՊԼԱՆ

Դասղեկ Թ.Մկրտչյան

ԿՐԹԱԿԱՆ- ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը).IV դասարանում սովորում են 23 աշակերտ : Դասարանը գեղեցիկ և համախմբված է: Բավականին ակտիվ և խելացի աշակերտներ են, ցուցաբերում են լավ վարքագիծ: երեխաները համերաշխ են ու հանդուրժող:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում-ներկայացվում է միջոցառումների օրացույցային պլանի աղյուսակ: Պետք է իրականացվի հայեցի, գեղագիտական, բարոյական, հայրենասիրական, սպորտային,

քաղաքացիական դաստիարակությանը նպատակաուղղված միջոցառումներ, բաց դասեր, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ, աշակերտների հայացքների, մոտեցումների բացահայտման ուղղությամբ քայլեր: Կարևորագույն միջոցը դասապրոցեսն է, որի ընթացքում երեխաներին տրվում են գիտելիքներ, հմտությունների զարգացում, կարողությունների դրսևորում, ինքնուրույնության նախաձեռնում, հանդուրժողականության խթանում:

3. Հայեցի դաստիարակություն

3.1-Հոգևոր դաստիարակությունը սկսվում է հայրենիքի հանդեպ սիրուց: Հայրենիքը սկսվում է

տնից, հողից, ջրից: Հայեցի դաստիարակություն նշանակում է սիրել հայոց լեզուն,

մեր ավանդույթներն ու սովորույթները, երգն ու պարը, մշակույթը, ազգային նվաճումները, հայտնագործությունները:

3.2- Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների և դաստիարակողի համատեղ գործունեության գործընթաց է, որը ձևավորում է գեղագիտական կուլտուրա: Գեղագիտական դաստիարակության զարգացմանը մեծապես նպաստում են արվեստի օջախներ այցելելը, էքսկուրսիաները և այլն:

3.3-Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն. Հայրենասիրության դաստիարակումը իրականացնում ենք գրական ստեղծագործությունների ընթերցումով, զրույցներով, աշակերտներին համապատասխան խմբակներում ընդգրկելով:

3.4- Ֆիզիկական դաստիարակությունը ուղղված է սովորողների օրգանիզմի ձևաբանական և ֆունկցիոնալ կատարելագործմանը, արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների դեմ կայունության ձևավորմանը, հիվանդությունները կանխելուն և առողջության պահպանմանը:

3.5-Աշխատանքային դաստիարակություն նշանակում է զուգակցել սովորողների մտավոր և ֆիզիկական աշխատանքը: Այդ իսկ պատճառով հարկավոր է սովորողներին ընդգրկել հանրօգուտ աշխատանքում, աշխատանքը դարձնել անհրաժեշտություն:

3.6-Բնապահպանական դաստիարակություն. Նպատակը շրջապատող միջավայրի նկատմամբ դպրոցականների պատասխանատվության ձևավորումն է: Պետք է անձի մեջ դաստիարակել, որ բնությունը ազգային հասարակական հարստություն է, որը պետք է պահել խնամքով:

Դպրոց-ընտանիք կապը-ձևավորվում է ծնողների և մանկավարժների համատեղ գործունեությունից: Այդ համատեղ գործունեությունը նախատեսում է երեխայի հանդեպ միասնական պահանջների մշակում: Ծնողներին պետք է ներգրավել դպրոցական աշխատանքների կատարմանն ու կազմակերպմանը:

Աշակերտի ազգանուն,անուն, հայրանուն	Դպրոց,ընդուն-ման տարեթիվը	Ծննդյան օրը,ամիսը,տարեթիվը	սեռը	հասցեն
Ասատրյան Անի Կամոյի	2020	26/06/2014	իգ.	Գ.Մեծ Մասրիկ
Ասատրյան Իվան Զավեն	2020	08/02/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Ավետիսյան Ալեքսան Արսենի	2020	01/02/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Ավետիսյան Վահրամ Ալիկի	2020	28/03/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Բարսեղյան Մնացական Սերոբ	2020	16/11/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Գասպարյան Մասիս Գարիկի	2020	19/05/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Գասպարյան Սուսաննա Հովնանի	2020	26/02/2014	իգ.	Գ.Մեծ Մասրիկ
Գրիգորյան Անժելա Արմենի	2020	27/06/2014	իգ.	Գ.Մեծ Մասրիկ
Դավթյան Տիգրան Վահանի	2020	30/04/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Զարոյան Սաթենիկ Արտյոմի	2020	23/12/2013	իգ.	Գ.Մեծ Մասրիկ
Խլոյան Մարինա Երվանդ	2020	24/08/2014	իգ.	Գ.Մեծ Մասրիկ
Խլոյան Միքայել Արամ	2020	02/11/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Խլոյան Նարեկ Արտեմ	2020	17/07/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Հունանյան Աննա Ստեփան	2020	16/04/2014	իգ.	Գ.Մեծ Մասրիկ
Հունանյան Մարկ Գոռի	2020	16/08/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Մախմուրյան Վալոդյա Ռուբենի	2020	04/02/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Մելքումյան Արմեն Վլադիսլավի	2020	24/01/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Մկրտչյան Վահրամ Արմենի	2020	24/07/2014	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Պողոսյան Գագիկ Արմանի	2020	14/11/2013	ար.	Գ.Մեծ Մասրիկ
Սաֆարյան Մարի Գեորգիի	2020	07/02/2014	իգ.	Գ.Մեծ Մասրիկ
Սիմոնյան Սեդա Վիկտորի	2020	11/02/2014	իգ.	Գ.Մեծ Մասրիկ
Սողոմոնյան Մարինե Եսայիի	2020	27/01/2014	.	Գ.Մեծ Մասրիկ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	Ամսաթիվ	Թեմա	Բովանդակություն	Արդյունք
1.	05.09.2023.	Գիտելիքի և դպրության օր	Գաղափար տալ գիտելիքի կարևորության, դերի և նշանակության մասին:Կարողանալ աշակերտների մեջ սերմանել մեծ սեր ու հավատ դեպի գիրն ու գրականությունը:	
2.	12.09.2023թ.	Տունը, որտեղ ես ապրում եմ	Հարազատ օջախի հանդեպ ջերմության ,սիրո և անկեղծ հոգատար վերաբերմունքի ձևավորում:	
3.	19.09.2023թ.	Խաչմերուկները և դրանց տեսակները	Գաղափար տալ երթևեկության կանոնների մասին:Խոսել խաչմերուկների և դրանց ճիշտ անցկացման մասին: Առանձնացնել հետիոտնային անցումները, դրանցից օգտվելու կանոններն ու ձևերը: Խոսել և ներկայացնել լուսակրի կարևորությունը և օգտագործման ձևերը:	
4.	26.09.2023թ.	Աշնան գույները: Բնությունն աշնանը	Խոսել տարվա եղանակների մասին: Դրանցից առանձնացնել աշունը: Փոքրիկ շարադրանքի միջոցով ներկայացնել աշնան ողջ հմայքը, գեղեցկությունը և օգտակարությունը:	
5.	03.10.2023թ.	Ընկերություն	<<Լավ ընկերը >> ստեղծագործության միջոցով ներկայացնել ընկերությունը: Խոսել լավ ընկերոջ հատկանիշների մասին և ներկայացնել առանձին-առանձին: Այնուհետև յուրաքանչյուրին հանձնարարել ներկայացնել իր լավագույն ընկերոջը՝ դրական և բացասական հատկանիշներով:	
6.	10.10.2023թ.	Ճանապարհային գծանշումներ	Ներկայացնել, թե ինչ են իրենցից ներկայացնում ճանապարհային գծանշումները, ինչպես պետք է օգտվել դրանցից: Այդ ամենը ցուցադրել գործնականում:	
7.	17.10.2023թ.	Ընտանիքում ամեն մեկն իր գործն ունի	Ներկայացնել ընտանիքի անդամներին: Հանձնարարել աշակերտներին նկարել և ներկայացնել այն մարդկանց, ովքեր ապրում են իրենց ընտանիքում և համարվում են ընտանիքի անդամ:Այնուհետև ներկայացնել նրանցից յուրաքանչյուրի կատարած աշխատանքը ընտանիքում:	
8.	31.10.2023թ.	Ք/պ. Բնապահպանական աղետներ	Խոսել բնության մասին, ներկայացնել բնության առանձնահատկությունները: Այնուհետև ներկայացնել այն աղետները, որոնք սպառնում են մեր բնությանը: Լրացուցիչ նյութերի օգնությամբ փորձել հնարավորինս շատ տեղեկություն	
			հաղորդել այն մեթոդների և միջոցների մասին,	

			որոնց օգնությամբ հնարավոր կլինի կանխել բնությանը սպառնացող աղետը:	
9.	02.11.2023թ.	Ք/պ. Ինչ է երկրաշարժը	Ներկայանցել երկրաշարժի առաջացման պատճառները: Բացատրել, թե ինչպես է այն կատարվում: Խոսել երկրաշարժից պաշտպանվելու ձևերի մասին: Ցուցադրել նկարներ և կարճամետրաժ հոլովակներ:	

10.	07.11.2023թ.	Ք/պ. Ճանապարհային երթևեկության կարգավորման նշանները	Նկարների միջոցով ներկայացնել ճանապարհային երթևեկության կարգավորման նշանները: Յուրաքանչյուր նշանի նշանակություն բացատրել և ներկայացնել:	
11.	14.11.2023թ.	Հայկական ժողովրդական հեքիաթներ	Խոսել հայկական ժողովրդական հեքիաթների մասին: Ընթերցել մի քանի հեքիաթ և մեկնաբանել:	
12.	21.11.2023թ.	Իմ հայրենիքը	Ներկայացնել մեր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը: Ներկայացնել խորհրդանիշները՝ զինանշանը, դրոշը, օրհներգը: Մեր դարավոր պատմությունը ամփոփել հակիրճխոսքով:	
13.	28.11.2023թ.	Ճանապարհայ ինշաններ	Ներկայացնել ճանապարհային նշաններն ուցուցադրել:	
14.	. 05.12.2023թ.	Եկեք միմյանց ասենքջերմ խոսքեր	Ջերմ խոսքերի արտաբերում մեկը մյուսինկատմամբ: Դրանց կարևորության և անհրաժեշտության գիտակցում	
15.	. . . 12.12.2023թ.	Աշակերտնե րի տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր իրադրություններո ւմ	Զևավորել և զարգացնել աշակերտների մեջ ուշադրությունն ու զգոնությունը, կարողանալգործել իրավիճակին Համապատասխան	
16.	19.12.2023թ .	Երբ մեծանամ	Պարզել, թե աշակերտներից յուրաքանչյուրը ինչ մասնագիտություն է ուզում ընտրել և ինչ է անումդրա համար	
17	11.01.2024թ	Փողոցն անցնելու կանոնները	Նկարների միջոցով ներկայացնել ճանապարհային երթևեկության կարգավորման նշանները: Յուրաքանչյուր նշանի նշանակություն բացատրել և ներկայացնել:	
18	18.01.2024թ	Իմ ծնողները	Սիրո, հարգանքի, դրական վերաբերմունքիդրսևորում ծնողի Հանդեպ	
19	25.01.2024թ	Ք/պ. Ինքնօգնություն նվոխօգնություն	Գաղափար այն մասին, թե ինչպես պետք է առաջինօգնություն ցուցաբերել տուժածին վնասվածքների դեպքում	
20	01.02.2024թ	Հաղթում է նա, ով չիհանձնվում	Պայքարի անհրաժեշտության գիտակցում: Հաղթանակի հասնելու ուղիների Ներկայացում	
21	08.02.2024թ	Տրանսպորտային միջոցների արգե-լակմանճանապարհը	Գաղափար տալ արգելող նշանների մասին	
22	15.02.2024թ	Ընտանի և վայրի կենդանիներ	Ներկայացնել ընտանի և վայրի կենդանիներ: Ընթերցել լրացուցիչ Նյութեր	
23	22.02.2024թ	Իմ ազատ ժամանակը	Պարզել, թե ով ինչպես է անցկացնում իր ազատ ժամանակը	
24	01.03.2024թ	Ք/պ. Արտակարգ	Ինչպես պետք է վարվել արտակարգ	

		իրավիճակների մասին	իրավիճակների պայմաններում:	

25	08.03.2024թ	Քո վարքագիծը տանը նդպրոցում	Ինչպիսի վարքագիծ պետք է ցուցաբերել տանը նդպրոցում: Ինչ իրավունքներ և պարտականություններ կան	
26	15.03.2024թ	Տրանսպորտային միջոցների տեսակները	Ինչ տրանսպորտային միջոցներ կան, ներկայացնել դրանցից մի քանիսը	
27	29.03.2024թ	Գարնան երանգները	Ներկայացնել գարունը նկարի և շարադրանքիմիջոցով	
28	05.04.2024թ	Սեղանի խաղեր երթևեկության կանոնների վերաբերյալ	Խաղի միջոցով ներկայացնել երթևեկության կանոնները	
29	12.04.2024թ	Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր իրադրություններում	Գաղափար տալ այն գործողությունների մասին,որոնք պետք է իրականացվեն կենցաղային վտանգավոր իրավիճակներում	
30	19.04.2024թ	Ինչպես խուսափել հիվանդանալուց	Հիվանդությունից խուսափելու համար անհրաժեշտ միջոցների և մեթոդների ներկայացում	
31	26.04.2024թ	Փողոցներում և ճանապարհներին աշակերտների վարքի կանոնների վերաբերյալխաղեր և մրցույթներ	Կազմակերպել խաղ, որի ժամանակ աշակերտներըկկարողանան ցուցաբերել ճիշտ վարքագիծ փողոցում և ճանապարհին	
32	03.05.2024թ	Հանրագումարայ ինպարապմունք	Կազմակերպել հանրագումարային պարապմունք	
33	10.05.2024թ	Ք/պ. Բնապահպանական աղետներ	Ինչ է իրենից ներկայացնում աղետը, ինչպիսիբնական աղետներ կան և ինչպես պետք է պաշտպանվել այդ աղետներից	
34	17.05.2024թ	Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր իրադրություններում	Ներկայացնել աշակերտների գործողություններըկենցաղային վտանգավոր իրավիճակներում	

07.12.2024

Դասղեկի աշխատանքի բնույթը, մանկավարժական գործառույթները, նպատակը և աշխատանքի ուղղությունները

Գործունեության շրջանակը ենթադրում է հետևյալ աշխատանքները.

1. Դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում՝

   *հետևում է աշակերտների հաճախելիությանը (մատյանում նշում է բացակայությունները, հետևում է, որ դրանց համար փաստաթուղթ ներկայացվի), *աշխատում է առարկայական ուսուցիչների հետ՝ առաջադիմության բարձրացման ուղղությամբ

   (պարբերաբար ստուգում է օրագրերը, վերլուծում է ընթացիկ և վերջնական գնահատականները)

   *հետևում է աշակերտների կարգապահությանը:

2 Աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում՝
   - կազմակերպում է դասարանական ժողովներ,
   - կազամկերպում է կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ,
   - կազմակերպում է այցելություններ թատրոն, համերգասրահ, թանգարաններ, ցուցահանդեսներ:
   - Սովորողների հանրօգուտ աշխատանքի (դպրոցամերձ տարածքի մաքրում և այլն) կազմակերպում:

3 Աշխատանք սովորողների ծնողների հետ՝
   - ծնողներից ակնկալում է, որ հետևեն երեխայի առաջադիմությանը,
   - ծնողների հետ անհատական զրույցներ է ունենում,
   - ծնողական ժողովներ է կազմակերպում:

4 Ծանոթացում սովորողների սոցիալական պայմաններին՝
   - ծանոթանում է սովորողների ընտանիքի կազմին,
   - նրանց բնակարանային և կենցաղային պայմաններին:
   - բարոյահոգեբանական պայմաններին

5 Դասարանի աշակերտների սննդի կազմակերպում (նյութական օգնության կազմակերպում):

6 Թղթավարություն՝
   - ամփոփում է աշակերտների առաջադիմության տվյալները,
   - լրացնում է դասամատյանը,
   - լրացնում է անձնական գործերը,
   - մշակում է դասղեկի աշխատանքային պլան:

Դասղեկական ժամի դաստիարակչական գործառույթները

Դասղեկական ժամը աշակերտների հետ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման կարևորագույն ձևերից մեկն է: Այն ներառվում է դասացուցակի մեջ և անց է կացվում յուրաքանչյուր շաբաթ՝ որոշակի օր:

Դասղեկական ժամի ձևերը տարբեր են. դասախոսություն, զրույց, բանավեճ, վիկտորինա, մրցույթ, խաղ, կոնֆերենս, հեռակա ճանապարհորդություն, տոն և այլն:

Դասղեկական ժամը կատարում է հետևյալ դաստիարակչական ֆունկցիաները. կրթական,

կողմնորոշման, ուղղորդման և ձևավորման:

Կրթական ֆունկցիա - կարևորվում է նրանով, որ դասղեկի ժամը ընդլայնում է աշակերտների գիտելիքների շրջանակը: Դասղեկական ժամի առարկա կարող է հանդիսանալ գիտությունների տարբեր ոլորտներից բերված տեղեկություններ, սոցիալական կյանքի երևույթներ, երեխաների հոգեբանական խնդիրներ:

Կողմնորոշող ֆունկցիա - նպաստում է իրադարձություններին և երևույթներին բարոյական գնահատական տալու ժամանակ՝ հենվելով բարոյական և հոգևոր արժեքների վրա, աշակերտների մոտ աշխարհի հանդեպ որոշակի վերաբերմունքի ձևավորմանը: Հաճախ դասղեկական ժամերը օգնում են աշակերտներին կողմնորոշվել հասարակական արժեքների մեջ:

Ուղղորդող ֆունկցիա - դասղեկի ժամի այս ֆունկցիան նախատեսում է աշակերտների գործունեության կազմակերպում, ազդելով նրանց վարքագծի վրա, որպեսզի գիտելիքները վերածվեն համոզմունքի:

Ձևավորող ֆունկցիա - արտահայտվում է աշակերտների մոտ իրենց արարքների և իրենք իրենց գնահատելու կարողության ձևավորման մեջ, օգնում է վարել երկխոսություն, շարադրել փաստերով, արտահայտել սեփական կարծիքը:

Հաճախ դասղեկի ժամը միաժամանակ կատարում է նշված բոլոր չորս ֆունկցիաները. այն և' կրթում, և' կողմնորոշում, և' ուղղորդում, և' ձևավորում է աշակերտներին: Այս ֆունկցիաները,

հնարավորինս պետք է արտացոլվեն դաստիարակչական միջոցառման նպատակի ձևակերպման մեջ:

Դասղեկի ժամերի թեմատիկան տարբեր է: Դասղեկի ժամերը կարող են նվիրվել.

- բարոյաէթիկական
- գիտության և իմացության
- գեղագիտական
- պետության և իրավունքի
- հիգենայի և առողջ ապրելակերպի
- հոգեբանական
- բնապահպանական
- համադպրոցական /կարևոր հասարակական իրադարձությունների, տոնական օրերի/ խնդիրների:

- Դաստեկի խնդիրը – ստեղծել մանկավարժական տարածք երեխայի ինքնության զարգացման, նրա ներաշխարհի հարստացման համար:

Լավ է, երբ երեխաների հետ շփվելիս դաստիարակը կառաջնորդվի յուրահատուկ կանոնակարգով, որը իր մեջ ներառում է այսպիսի կանոններ.

- Սիրել երեխաներին
- Երբեք չմոռանալ խրախուսել երեխաներին լավ արարքի համար
- Երբեք չհամեմատել երեխաներին
- Չունենալ սիրելիներ
- Երբեք չբողոքել երեխաներից
- Կարողանալ ներել
- Կարողանալ օգնել
- Կարողանալ համբերել և սպասել
- Կարողանալ հետաքրքիր մարդ լինել
- Կարողանալ սիրով պահանջել և սիրել պահանջելով
- Կարողանալ յուրաքանչյուրի համար բարի խոսքեր գտնել
- Կարողանալ ընդհանուր լեզու գտնել ուսուցիչների և ծնողների հետ
- Կարողանալ ցանկացած աշխատանք կատարել երեխաների հետ
- Յուրաքանչյուր երեխայի մոտ գտնել կարևոր որակներ և ջանալ զարգացնել դրանք
- Ամեն ինչ հորինել նրանց հետ միասին, այլ ոչ թե նրանց փոխարեն Սովորեցնել երեխաներին բարություն, պատասխանատվություն, հարգանք իրենց և մյուսների նկատմամբ:

Դասղեկությունը բավականին աշխատատար, բարդ գործ է: Միշտ պետք է զբաղվել երեխաների հետ, միշտ նոր սնունդ տալ նրանց ուղեղին, պատկերացմանը, հոգուն, արդյունքը երկար սպասել չի տա:

Ծնողական ժողով

Քննարկվող հարցեր		Ամիս, ամսաթիվ
1.	1.Դասարանական ծնողական խորհրդի ընտրություն: 2.Կարգապահական հարցերի քննարկում:	Սեպտեմբեր
2.	1.Ծնողների իրավունքների և պարտականությունների մասին իրազեկում և քննարկում 2.Ուսման առաջադիմության և բացակայությունների հետ կապված հարցերի քննարկում:	Դեկտեմբեր
3	1. Կարգապահական հարցերի քննարկում 2. Ուսման առաջադիմության և բացակայությունների հետ կապված հարցերի քննարկում 3. Պատմամշակութային էքսկուրսիայի կազմակերպում 4. Ընթացիկ հարցեր	Հունվար
4	1.2023-2024ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում 2. Ընթացիկ հարցեր.	Մայիս